

**Բնական գիտությունների ֆակուլտետի
գիտական խորհրդի ընդլայնված նիստում**

2016թ. հուլիսի 2-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ Բնական գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի ընդլայնված նիստ՝ ֆակուլտետի ղեկանի ԺՊ, ֆ.մ.գ.թ., դոցենտ Մ. Ա. Զաքարյանի նախագահությամբ:

Ֆակուլտետի գիտխորհրդի ընդլայնված նիստին մասնակցում էին գիտխորհրդի անդամները, հրավիրված էին ֆակուլտետի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները, ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս.Ա. Առաքելյանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.

1. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում:
2. Ֆակուլտետի ղեկանի ամփոփ հաշվետվությունը՝ 2015-2016 ուստարվա վերաբերյալ:
3. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական ծանրաբեռնվածությունների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Նախ ամփոփվեցին 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Մասնավորապես նշվեց, որ քննաշրջանն անցկացվել է սահմանված կարգով, ըստ 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի:

Ընդգծվեց, որ Բնական գիտությունների ֆակուլտետում առաջադիմությունը կազմել է 85,53%: 2015-2016 ուսումնական տարվա ամառային քննաշրջանին մասնակցել է 85 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ ստացել է 3 ուսանող:

Ֆակուլտետի 14 ուսանող քննաշրջանը փակել է ակադեմիական պարտքերով Ֆակուլտետի 12 ուսանող օգտվել է ուսման վճարի մասնակի փոխհատուցումից:

Այնուհետև ֆակուլտետի ղեկանը ամփոփեց 2015-2016 ուստարվա ընթացքում կատարված աշխատանքները:

Նշվեց, որ բուհական համակարգում կատարվող գործընթացները, փոփոխություններն ու նորամուծությունները իրենց արտացոլումն են գտել նաև Բնական գիտությունների ֆակուլտետում ուսուցանվող մասնագիտություններում:

Իրականացվում են գործընթացներ, որոնք հետապնդում են կրթության որակի բարձրացման նպատակ: Առաջին հերթին հարկ է նշել ֆակուլտետում գործող բաց, հրապարակային գործելակերպը: Դեկանատի աշխատանքները կազմակերպված են այնպես, որ ուսանողների վերաբերյալ հրապարակման ենթակա տվյալները, մասնավորապես ակադեմիական առաջադիմությունը, լինի մատչելի և հասանելի ոչ միայն ուսանողների, այլև ողջ հանրության համար:

Քննաշրջանի ընթացքում յուրաքանչյուր օրվա արդյունքները հրապարակվում են մասնաճյուղի կայքում և փակցվում ֆակուլտետի հայտարարությունների տախտակին: Վերահսկման այս համակարգի ներդրումը ակնառու դրական է անդրադարձել ուսման առաջադիմության և կրթության որակի վրա:

Ֆակուլտետում թափանցիկ են իրականացվում նաև յուրաքանչյուր կիսամյակ կրթաթոշակների նշանակման և տարին մեկ անգամ իրականացվող փոխատեղման գործընթացները: Հատկանշական է, որ այս գործընթացներում լուրջ մասնակցություն են ունենում ուսանողները՝ որպես գլխավոր շահառու:

Ձեկուցողը նաև ըստ մասնագիտությունների վերլուծեց քննաշրջանի արդյունքները՝ ընդգծելով ձեռքբերումներն ու բացթողումները:

Քննարկելով ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական ծանրաբեռնվածությունների հարցը՝ նշվեց որ պատրաստ են 2016-2017 ուստարվա անհատական ծանրաբեռնվածությունները, ըստ այդմ՝ դասախոսները կարող են նոր ուսումնական տարվա համար կազմել իրենց անհատական զարգացման և աշխատանքային պլանները, նախապատրաստել դասընթացների փաթեթները:

Նիստի ընթացքում ամփոփիչ ելույթ ունեցավ մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը՝ անդրադառնալով ուսումնական գործընթացի շարունակական բարելավմանը ուղղված մի շարք խնդիրների, ընդգծեց, որ մինչև նոր ուսումնական տարին մասնաճյուղում կկատարվեն կառուցվածքային լուրջ փոփոխություններ՝ մասնավորապես բուհում մասնագիտության կրթական ծրագրի ղեկավարի ինստիտուտը ներդնելու և գործարկելու առնչությամբ, կիրականացվեն մասնագիտությունների հետ կապված որոշ փոփոխություններ:

ՆԱԽԱԳԱՀ

Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կ.Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ